

Հաշվետու գործակալությունը՝ Երկիրը՝

Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի մասով Հայաստան

ԱՌԱՋՆԹԱՑԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԶԵԿՈՒՅՑ

Համարը և անվանումը՝

Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում ՄԱԶԾ/ԳԷՖ/00057439/00060500

Հաշվետու ժամանակաշրջանը՝

Հունվար-դեկտեմբեր 2013թ.

I. ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է պահպանել գլոբալ նշանակություն ունեցող Հայաստանի կենսաբազմազանությունը: Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելու ներկայիս պահպանվող տարածքների համակարգի ներքո էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունը և առավել ակտիվ մոտեցում ցուցաբերելու կենսաբազմազանության պահպանության գործում: Ծրագրի երկու հիմնական շեշտադրումներն են. (1) ռացիոնալացնել պահպանվող տարածքների համակարգը՝ արգելավայրերի կայացմանն ու գործարկմանը վերաբերող իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ համակարգերը բարելավելու միջոցով և (2) զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ փորձարկելով հատուկ պահպանվող տարածքների կառավարման ներկայումս Հայաստանում գրեթե գոյություն չունեցող գործիքները:

Ծրագրի հիմնական արդյունքներն են՝

1. Արգելավայրերի ստեղծման, կառավարման և բիզնես պլանավորման ազգային գործառնական ուղեցույցներն ու նորմերը:
2. Կմշակվի արգելավայրերի կառավարման գործում տարբեր հաստատությունների ինստիտուցիոնալ պարտականությունները և պատասխանատվությունները ամրագրող ենթաօրենսդրական ակտ:
3. Երեք նոր արգելավայրեր. «Գնիշիկ»-ի ստեղծում Վայոց Ձորի մարզում, «Խուստուփ»-ի ստեղծում և «Զանգեզուր» պետական արգելավայրի ընդլայնում Սյունիքի մարզում՝ մոտ 48,000 հեկտար ընդհանուր մակերեսով:
4. Կմշակվի հայեցակարգ երկու կոնկրետ մոդելների վերաբերյալ (զուտ համայնքային կառավարում և համատեղ կառավարում), որոնք կփորձարկվեն երեք համապատասխան արգելավայրերում:
5. Ազգային ուսումնական դասընթացներ, շեշտադրելով IUCN-ի IV կատեգորիայի արգելավայրերը: Տեղական մակարդակով ծրագիրը կնպաստի ցուցադրական արգելավայրերում տեղեկատվական և կրթական երեք կենտրոնների ստեղծմանը:
6. Կմշակվեն և յուրաքանչյուր փորձնական արգելավայրում կիրականացնվեն համակցված կառավարման և բիզնես պլաններ, որոնք հիմնված կլինեն միջազգային փորձի վրա և կհանդիսանան փոքր բիզնեսի համար իրապաշտական ուղեցույց: Պլանները կօգտագործվեն որպես ռեսուրսների կայուն օգտագործման, ինչպես նաև տուրիզմի, կայուն արածեցման, կարգավորված սիրողական որսորդության և վաճառման ենթակա բույսերի հավաքման հիմք:
7. Կառավարման և եկամտաբեր գործունեության մեկնարկ՝ (i) տեղական համայնքների անդամների աջակցությամբ և մասնակցությամբ որսագողության դեմ պայքարելու գործիքներ. (ii) էկոհամակարգերի մոնիթորինգի ծրագրերի իրականացում. (iii) կենդանիների արածեցման համակողմանի ծրագրի իրականացում. (iv) տուրիզմի կայուն զարգացում:
8. Կենսաբազմազանության արդյունավետ պահպանության ոլորտում արգելավայրերի ձախողումը հաղթահարող կրիտիկական զանգվածի ցուցադրում:

Սույն Ծրագրի ջանքերը կգործադրվեն հատուկ պահպանվող տարածքների ազգային համակարգը ավելի լավ զինելու համար, ինչը հնարավորություն կտա ներառել և պահպանել ներկայումս թերի ներկայացված էկոհամակարգերը և դրանց կապակցված տեսակները: Համայնքային տարածքներում ծրագիրը ներդրում կունենա լանդշաֆտների արդյունավետ կառավարման ապահովման գործընթացին, նպաստելով չքավորության

նվազեցմանը: Ծրագիրը կհզորացնի Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությունը:

Ծրագիրը ներդրում է ունենում ՄԱԿԶԱԾ (UNDAF) ձեռքբերում 4-ին և ՀԾ (CP) ձեռքբերում 7-ին, ՀԾԳՊ (CPAP) արդյունք 7.4-ին:

Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ են հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարությունը (ՀՀ ԲՆ) և նրա «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԲԾԻԳ ՊՀ): Ծրագիրը կատարող հասարակական կազմակերպությունն է (ՀԿ) Բնության Համաշխարհային Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF-Հայաստան):

II. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ծրագիրը ամբողջությամբ ֆինանսավորվում է Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից և բյուջեն կազմում է 950,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի ընդհանուր բյուջեն, ներառյալ համաֆինանսավորումն ու ԳԷՀ-ի միջոցները, կազմում է 2,950,000 ԱՄՆ դոլար: Համաֆինանսավորումը կազմում է 2,000,000 ԱՄՆ դոլար, ներառյալ ՀՀ ԲՆ կողմից հատկացվող 1,500,000 ԱՄՆ դոլարի համարժեք գումարը և WWF-ի կողմից հատկացվող 500,000 ԱՄՆ դոլարը:

ԳԷՀ-ի կողմից 2012թ. հատկացվող գումարը կազմում է 253,810 ԱՄՆ դոլար, որից 00057439 ենթածրագրին (Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում) հատկացվող գումարը կազմում է 152,850 ԱՄՆ դոլար (ԲՆ և ԲԾԻԳ ՊՀ), իսկ ՀԿ 00060500 ենթածրագրինը (Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների զորացում)՝ 100,960 ԱՄՆ դոլար (WWF-Հայաստան):

III. Արդյունքները

1. Բաղադրիչ 1. ԲՀՊՏ համակարգի ռացիոնալացում:

Արդյունք 1.1 2006 թ.-ի Հայաստանի բնության պահպանվող տարածքների մասին օրենքի կադարումն ապահովող ենթաօրենսդրաման ակտերի մշակում

- ՀՀ Հատուկ պահպանվող տարածքների համակարգն ապահովող ՀՀ օրենքների փաթեթը /նախագիծ/ 2012թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարություն: 2013թ. հունվարին օրենքների փաթեթի նախագիծը վերադարձվել է՝ ՀՀ տարածքային կառավարման, ֆինանսների նախարարությունների, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի հետ լրացուցիչ քննարկումների նպատակով: Հետագա դիտողություններ և առաջարկություններ չեն ստացվել: 2013թ. մայիսին փաթեթը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: 2013թ. սեպտեմբերին օրենքների փաթեթի նախագծի վերաբերյալ ստացվել է ԱԺ Իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի եզրակացությունը և Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի դրական կարծիքը, և այն ներառվել ԱԺ 2013թ. նիստերի օրակարգում: ՀՀ օրենքների փաթեթը ներառում է “Հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին”, “Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքների նախագծերը, փոփոխություններ ՀՀ Հողային և Ջրային օրենսգրքերում: Դրանցից “Հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծը իրականում նոր օրենք է:

Չնայած ակնհայտ հաջողությանը, ՀՀ օրենքների փաթեթի նախագիծը ութ ամիս ուշացումով ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացնելը պայմանավորված էր ծագած բարդ խնդիրներով, մայրաքաղաքում և համայնքներում կազմակերպված լայն հասարակական լսումներով և ստացված մեծաքանակ դիտողություններով ու առաջարկություններով:

Ի հավելումն առաջարկվող փաթեթի, պատրաստվել է “Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 22-ի թիվ 72-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հնարավորություն է տալիս գործնականում համայնքային կառավարմամբ պահպանվող տարածքի ստեղծմանը: Այս փաստաթղթի անհրաժեշտությունը բխում է ՀՀ

Ազգային ժողովի կողմից Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքների փաթեթի նախագծի ընդունումից:

“Արդյունք 1.2 Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևափոխում:

- “Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևավորում” մեթոդոլոգիական ուղեցույցը քննարկվել է 2013թ. մայիսին կազմակերպած կլոր սեղանի ժամանակ: Ուղեցույցի նպատակն է տալ համապատասխան մեխանիզմներ, որոնցով կապահովվեն օրենսդրությամբ արգելավայրերի կառավարման գործընթացներում ընդգրկված կողմերի ներդաշնակ և փոխհամաձայնեցված գործողությունները:

Արդյունք 1.3 Թերերկայացված էկոհամակարգերում երեք նոր արգելավայրերի ստեղծում

- Նախատեսվող “Խուստուփ” և “Գնիշիկ” ՊՏ-ների ստեղծման և գործող “Ջանգեզուր” արգելավայրի ընդլայնման գոտիների հստակ քարտեզագրման, սահմանների ուսումնասիրման և նկարագրության աշխատանքները ավարտվել են, քննարկվել են Վայոց Ձորի չորս համայնքների և մարզպետարանի ներկայացուցիչների հետ և Սյունիքի մարզի 15 համայնքների և մարզպետարանի ներկայացուցիչների հետ: Համայնքներից ստացվել են ավագանիների կողմից հաստատված համապատասխան որոշումները:

➤ Նախատեսվող “Գնիշիկ” համայնքային կառավարմամբ ՊՏ-ի ընդհանուր տարածքը նախատեսվում է 6,010.74 հա, որից Արենին՝ 710.46 հա, Մոզրովը՝ 2,919.03 հա, Խաչիկը՝ 2,381.25 հա: Ազարակածոր համայնքի հողերը այս փուլում չեն ներկայացվում մեկուսացված դիրքի և համեմատաբար փոքր չափերի պատճառով:

➤ Նախատեսվող “Խուստուփ” պետական արգելավայրի ընդհանուր տարածքը նախատեսվում է 6,946.74 հա, որից Ճակատենը՝ 1,162.22 հա, Ծավը՝ 1,154.93 հա, Գեղանուշը՝ 3,064.55 հա, Լեռնածորը՝ 1,565.04 հա:

➤ Գործող “Ջանգեզուր” ընդլայնված պետական արգելավայրի ընդհանուր տարածքը նախատեսվում է 8,501.87 հա, որից Բնունիսը՝ 1,079.44 հա, Դաստակերտը՝ 1,148.75 հա, Ձորաստանը՝ 910.10 հա, Շենաթաղը՝ 1,231.09 հա, Տաթևը՝ 913.19 հա, Լեռնածորը՝ 427.10 հա, Նժդեհը՝ 1,405.41 հա, Գեղին՝ 1,282.12 հա, Նոր Աստղաբերդը՝ 104.67 հա:

Ցավոք, համապատասխան համայնքների հետ “Խուստուփ” արգելավայրի ստեղծման և “Ջանգեզուր” արգելավայրի ընդլայնման քարտեզների համաձայնեցումը պահանջեց 8 ամիս ավել ժամանակ, քան նախատեսվում էր, քանի որ ԱԺ ընտրությունները 2012թ. մայիսին, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները 2012թ. սեպտեմբերին և նախագահական ընտրությունները 2013թ. փետրվարին տեղական համայնքների և կառավարման մարմինների ուշադրությունից դուրս թողեցին բնապահպանական խնդիրները և Ծրագիրը:

Ավելին, համայնքապետերի մոտ 20%-ը և համայնքների ավագանիների անդամների 80%-ը փոխվեցին. իշխանության փոխանցումը նախկին համայնքապետերից նորերին պահանջեց 1-2 ամիս ժամանակ, և այս համայնքներում պահանջվեցին մի շարք լրացուցիչ հանդիպումներ քարտեզների նախագծերը համաձայնեցնելու համար: Բացի այդ, ի հայտ եկան բազմաթիվ տեխնիկական խնդիրներ, ինչպես օրինակ, տարածայնություններ համայնքային և կադաստրային քարտեզների միջև, տարածքներ, որոնց բարձր կենսաբանական արժեքները համընկնում են մեծ քանակի սեփական հողերի հետ, երկրաբանական հետախուզման ներքո տարածքներ, նախորդ քարտեզագրական աշխատանքներից հետո նոր սեփակաշնորհումներ կամ վարձակալություններ:

- “Խուստուփ” պետական արգելավայրի ստեղծման, “Ջանգեզուր” պետական արգելավայրի սահմանների փոփոխության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մայիսի 30-ի N 926-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն 2013թ. հուլիսին: Հաշվի առնելով համայնքների խնդրանքը և այս տարածքում կենսաբազմազանության յուրահատկությունները՝ նշված արգելավայրերի կանոնադրությունները թույլ են տալիս այլ ձեռնարկատիրական գործունեությունների շարքում նաև հանգիստը, արածեցումը, խոտհունձը, մեղվապահությունը, բույսերի և սնկերի հավաքը:

Ավելի ուշ այս նախագիծն ընդգրկվել է “Ջանգեզուր” կենսոլորտային համալիր ստեղծելու, “Ջանգեզուր” կենսոլորտային համալիր” պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև “Խուստուփ” պետական արգելավայր ստեղծելու, “Խուստուփ” պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում

փոփոխություններ կատարելու մասին“ ՀՀ կառավարության որոշման նախագիծի մեջ և 2013թ. օգոստոսի 24-ին ներկայացվել ՀՀ կառավարություն/կրկին ներկայացվել է 2013թ. սեպտեմբերի 30-ին և նոյեմբերի 19-ին/:

- Պատրաստվել և համապատասխան համայնքների և Վայոց Ձորի մարզպետարանի հետ քննարկվել է “Գնիշիկ” համայնքային կառավարմամբ պահպանվող լանդշաֆտի ստեղծման վերաբերյալ Արենի, Գնիշիկ և Խաչիկ համայնքների ավագանու համատեղ որոշման նախագիծը:

Համայնքային կառավարմամբ “Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի ստեղծումը կախված է “Հատուկ պահպանվող տարածքների մասին” 2006 թ. ՀՀ օրենքն ապահովող ՀՀ օրենքների փաթեթը ուժի մեջ մտնելուց, որը կապահովի նոր տիպի պահպանվող տարածքի՝ “Պահպանվող լանդշաֆտի” ստեղծումը/ IUCN IV կատեգորիա/ և կխթանի համայնքների կողմից պահպանվող տարածքների անմիջական կառավարմանը: Ավելին, պահանջվում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 22-ի թիվ 72-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատումը, որը գործնականում հնարավորություն է տալիս համայնքային կառավարմամբ ՊՏ-ի ստեղծման:

նախարարություններ և ստացել դրական կարծիք: Կառավարման մոդելները հետապնդում են հետևյալ նպատակները. նպաստել ԲՀՊՏ-ների կառավարման արդյունավետության բարձրացմանը, ապահովել շահագրգիռ կողմերի ակտիվ և անմիջական ներգրավումը ԲՀՊՏ-ների կառավարման գործընթացում, տեղական համայնքների անդամներին այլընտրանքային եկամուտների ստեղծման հնարավորություն տալ:

Պետական արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորման և Հատուկ պահպանվող տարածքների կառավարման մոդելների ներդրման մեթոդոլոգիական ուղեցույցերը մեկ անգամ ևս քննարկվել են Բնապահպանության նախարարությունում և հաստատվել ԲՆ նախարարի կողմից /30 օգոստոսի, 2013թ. N 195Ա հրաման/ և տպագրվել 2013թ. նոյեմբերին:

2. Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների զորացում.

Արդյունք 2.1. Արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների համար պետական և տեղական ուսումնական ծրագրեր

- 2012թ. ապրիլի 16-17-ը և 19-20-ը Քաջարան քաղաքում և Շիկահող պետական արգելավայրում կազմակերպվել են ԲՀՊՏ-ների վերաբերյալ իրազեկության բարձրացման սեմինարներ Քաջարան, Գեղի, Լեռնաձոր, Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների անձնակազմի, ավագանու անդամների, բնակիչների համար /44 մասնակից/:

Հասարակության իրազեկման հանդիպումներ են կազմակերպվել 2013թ. հոկտեմբերի 16-18-ը Սյունիքի մարզի Շենաթաղ, Նժդեհ, Բնունիս, Դաստակերտ, Տաթև, Ձորաստան, Ծավ, Գեղանուշ և Վայոց Ձորի մարզի Արենի, Գնիշիկ և Խաչիկ համայնքներում /ընդհանուր՝ 123 մասնակից/:

Ուսումնասիրությունների հիման վրա հրատարակման են պատրաստվել ցուցադրական պահպանվող տարածքների առանձնահատկությունները նկարագրող առանձին բուկլետներ/Գնիշիկ, Ջանգեզուր, Խուստուփ/:

Մշակվել, “Շիկահող” պետական արգելոց” ՊՈԱԿ-ում և հարակից համայնքներում քննարկվել և հաստատվել են “Ջանգեզուր” և “Խուստուփ” արգելավայրերի ղեկավար անձնակազմի ուսումնական ծրագրերը և հասարակության իրազեկման սեմինարների և դասընթացների թեմաները:

“Ջանգեզուր” և “Խուստուփ” արգելավայրերի ղեկավար անձնակազմի և հարակից համայնքների ղեկավարների ուսումնական դասընթացների իրականացումը, ինչպես նաև բուկլետների հրատարակումը կիրականացվի պահպանվող տարածքների պաշտոնապես ստեղծումից/ընդլայնումից հետո, երբ պաշտոնապես կհաստատվեն համապատասխան քարտեզները և կանոնադրությունները: Հակառակ դեպքում միշտ ռիսկ կա ավարտական փաստաթղթում անկանխատեսելի փոփոխությունների հետևանքով ոչ ճիշտ տեղեկատվության մատուցման:

Արդյունք 2.2. Երեք արգելավայրերի կառավարման և բիզնես պլանների մշակում

- Դաշտային աշխատանքների ընթացքում որոշվել և համապատասխան շահառուների հետ քննարկվել են “Խուստուփ”, “Չանգեզուր” և “Գնիշիկ” ՊՏ-ներում նախագգուշացնող ցուցանակների, արգելափակոցների և պահակատների տեղադրման վայրերը:

- Պատրաստվել են “Խուստուփ” և “Չանգեզուր” արգելավայրերի համակցված կառավարման և բիզնես պլանները, որպես “Շիկահող” պետական արգելավայր” ՊՈԱԿ-ի կառավարման պլանի մի մաս /վերջինս ներառում է նաև “Շիկահող” պետական արգելոցի և “Սոսիների պուրակ” արգելավայրի կառավարման պլանները/: Պլանները 2013թ. նոյեմբերին ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարություն:

Պլանները ներառում են ընդհանուր տեղեկություն, տեղեկություն բնական պայմանների, ֆլորայի և ֆաունայի, հարակից համայնքների տնտեսական վիճակի մասին, հաստիքացուցակ, ֆինանսավորում, հետազոտություն և մոնիտորինգ, այցելուների ծրագրեր, 5-ամյա գործողությունների պլան և ենթակառուցվածքների քարտեզներ/նկարագրելով նախագգուշական նշանների, արգելափակոցների և պահակատների տեղադիրքը/:

Կառավարման պլանների նախագծերը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է “Խուստուփ” և “Չանգեզուր” պետական արգելավայրերի պաշտոնապես ստեղծումը/ընդլայնումը: Հակառակ դեպքում միշտ ռիսկ կա ավարտական փաստաթղթում անկանխատեսելի փոփոխությունների հետևանքով ոչ ճիշտ տեղեկատվության մատուցման:

Կառավարման պլանները կարող են պատրաստ լինել, հաստատվել և գործարկվել միայն համապատասխան ՊՏ-ների ստեղծումից/ընդլայնումից, կանոնադրությունների հաստատումից և սահմանների նշագրումից հետո:

- Պատրաստվել են “Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի միասնական կառավարման և բիզնես պլանները և “Գնիշիկ” ՊՏ-ի աջակից գոտու տնտեսական զարգացման պլանը/վերջինիս իրականացմանն աջակցել է CEPF-ը/ և 2013թ. ապրիլին և մայիսին քննարկվել շահագրգիռ Արենի, Խաչիկ և Մոզրով համայնքների հետ: Ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել ավարտական նախագծում: Երկու փաստաթղթերն էլ հավանություն են ստացել շահագրգիռ Արենի, Գնիշիկ, Խաչիկ համայնքների կողմից:

“Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի կառավարման և բիզնես պլանը ներառում է ընդհանուր տեղեկություն, գնահատում և վերլուծություն, տեսլական և նպատակներ, գոտիավորում, կառավարման ուղեցույց, բյուջե և ֆինանսավորում: Հավելվածը ներառում է քարտեզներ, կենդանական և բուսական տեսակների ցանկ, տեղեկատվություն պատմական և մշակութային հուշարձանների վերաբերյալ:

“Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի կառավարման և բիզնես պլանը կարող է պատրաստ լինել, հաստատվել և գործարկվել միայն պահպանվող լանդշաֆտի ստեղծումից, կանոնադրությունների հաստատումից և սահմանների նշագրումից հետո:

“Գնիշիկ” ՊՏ-ի աջակից գոտու տնտեսական զարգացման պլանը ներառում է տարածքի ընդհանուր նկարագրություն, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական վիճակ, զարգացման գերակայություններ և նպատակներ, հատուկ միջոցառումներ, ֆինանսական գնահատում, եզրակացություն և առաջարկություններ:

Արդյունք 2.3. Աջակցություն կառավարման և բիզնես պլանների իրականացմանը

- Չնայած, Ծրագրով նախատեսված 3 պահպանվող տարածքներից 2-ը դեռ պաշտոնապես չեն ստեղծվել, գործընթացն արագացնելու նպատակով՝ 2013թ. 3-րդ քարտրդից մեկնարկվել են տեղում իրականացվող գործողությունները: Հետևյալ գործողությունները նպատակ ունեն երեք արգելավայրերում աջակցելու կառավարման և եկամուտների ստացման առանցքային գործողություններին.

- աջակցություն որսագողության դեմ միջոցառումներին, օրինակ, վտանգված տեսակների հիմնական ապրելավայրերի մուտքի սահմանափակում. “Չանգեզուր” և “Խուստուփ” պետական արգելավայրերի թվային քարտեզների վրա և տեղերում որոշվել են պահակատների, արգելափակոցների և նախագգուշացնող ցուցանակների տեղադրման վայրերը: Ընդհանուր առմամբ նախագծվել և

պատրաստվել են 12 ցուցանակներ, որոնցից 10 նախագգուչական ցուցանակները՝ “արգելված է որսը և անտառահատումը” գրոթայամբ, կտեղադրվեն “Զանգեզուր” և “Խուստուփ” արգելավայրերում /7-ը՝ Զանգեզուր, 3-ը՝ Խուստուփ/, մյուս 2-ը կտեղադրվեն պահակատների վրա: Պատրաստվել են “Զանգեզուր” և “Խուստուփ” արգելավայրերի պահակատների ստեղծման թույլտվության փաստաթղթերը: Ձեռք են բերվել արգելափակոցների և 3-րդ պահակատան կառուցման համար անհրաժեշտ նյութերը: Պահակատների համար գնվել է անհրաժեշտ գույք:

Ակնհայտ է, որ պահակատների, արգելափակոցների և նախագգուչացնող ցուցանակների տեղադրումը հնարավոր է միայն պահպանվող տարածքների պաշտոնապես ստեղծումից/ընդլայնումից հետո:

- ՊՏ-ների կենսաբազմազանության և թիրախային ապրելավայրերի մոնիտորինգային հետազոտության գործընթացին աջակցելու նպատակով սկսվել է սարքավորումների գնման գործընթացը, մասնավորապես, գնվել են տեսախցիկ և համակարգիչ:

- Համակողմանի արածեցման ծրագրի զարգացման շրջանակներում համայնքի անդամներին և ՊՏ-ների ղեկավար անձնակազմին աջակցելու նպատակով Դաստակերտ համայնքի/Զանգեզուր/ համար գնվել է մամլիչ-բարդոցիչ մեքենա:

Տեղում որսագողության դեմ, ապրելավայրերի մոնիտորինգի, արածեցման, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացումը հնարավոր է միայն պահպանվող տարածքների պաշտոնապես ստեղծումից/ընդլայնումից հետո:

Արդյունք 2.4. Քաղված դասերի արձանագրում և այլ վայրերում կիրառելու համար պատրաստում

Այս Արդյունքը դեռ չի մեկնարկել, քանի որ չեն ստեղծվել ծրագրով նախատեսված պահպանվող տարածքները:

3. Իրազեկության բարձրացում և համագործակցություն: Տեղեկատվական հանդիպումներ և մասնակցային սեմինարներ են կազմակերպվել Սյունիքի մարզի Լեռնաձոր, Գեղի, Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ձորաստան, Անտառաշատ, Տաթև, Լոր, Սիսիան, Շենաթաղ, Բնունիս, Դաստակերտ և Նժդեհ համայնքների ներկայացուցիչների հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել Սյունիքի փոխմարզպետի և Քաջարանի քաղաքապետի հետ՝ Ծրագրի զարգացումները ներկայացնելու և կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով: Հանդիպումների արդյունքում, հաշվի առնելով ստացված առաջարկությունները և տարածքի կենսաբազմազանության յուրահատկությունը, „Զանգեզուր“ և „Խուստուփ“ պետական արգելավայրերի կանոնադրությունները թույլ են տալիս այլ ձեռնարկատիրական գործունեությունների շարքում նաև կայուն արածեցումը, խոտհունձը, մեղվապահությունը, բույսերի և սնկերի հավաքը:

2013թ. օգոստոսի 9-ին Կապանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցած հանդիպումը կազմակերպվել էր ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ի պատասխան “Ընդդեմ իրավական կամայականության” ՀԿ-ի կողմից նախարարությանն ուղղված նամակի, կապված ՊՏ-ների, մասնավորապես “Խուստուփ” ՊՏ-ի ստեղծման գործընթացի վերաբերյալ: Հանդիպման մասնակիցները՝ ներկայացուցիչներ Կապանից, Ճակատեն և Գեղի համայնքներից, տեղական ՀԿ-ից և ԶԼՄ-ներից, անհրաժեշտ տեղեկատվություն ստացան ՊՏ-ների ստեղծման ներկա ընթացակարգերի, ինչպես նաև Ծրագրի արդյունքների վերաբերյալ: Այնուհետև տեղի ունեցան լայն քննարկումներ: Մասնակիցները մտահոգություն հայտնեցին առաջարկվող մի քանի սահմանափակումների, մասնավորապես, ՊՏ-ներ միայն հատուկ թույլտվությամբ մուտք գործելու և թրթուռավոր մեքենաների մուտքի կակոնակարգման վերաբերյալ: Ճակատենի գյուղապետը համաձայն չէր “Խուստուփ” արգելավայրի կակոնադրության մի քանի կետերի հետ:

Տեղեկատվական հանդիպումներ և մասնակցային սեմինարներ են կազմակերպվել Վայոց Ձորի մարզի շահագրգիռ համայնքների/Ագարակաձոր, Արենի, Խաչիկ, Մոզրով/ և տարածքային կառավարման մարմնի ներկայացուցիչների հետ:

Սույն համագործակցության շրջանակներում ներկայացված առաջարկությունները հաշվի են առնվել պահպանվող տարածքների կառավարման և բիզնես պլանների նախագծերում:

Փոխհամաձայնություն է ձեռք բերվել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի

հետ՝ ուսումնասիրելու այսպես կոչված “մասնավոր պահպանվող տարածքի” ստեղծման հնարավորությունները “Չանգեզուր” պետական արգելավայրի բուֆերային գոտում և “Գնիշիկ” համայնքային կառավարմամբ պահպանվող լանդշաֆտում:

4. Մոնիտորինգ և հաշվետվության ներկայացում: Մոնիտորինգի և հաշվետվության փաստաթղթերը կազմվում են համապատասխան ՄԱԶԾ Ծրագրային մոնիտորինգի և Գնահատման պլանի: 2010թ. և 2011թ. և 2012թ. և 2013թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների առաջընթացի հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԳԷՀ և ՀՀ ԲՆ:

5. Ֆինանսական իրագործում: Ծրագրի ծախսը 2013թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար կազմել է 149,176.93 ԱՄՆ դոլար /50.4%, որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթածրագրի ծախսը՝ 93,346.50 ԱՄՆ դոլար (56.3 %), իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 000605000 ենթածրագրինը՝ 55,950.11 դոլար (43.0%): 2013թ. վերջում ծախսը կկազմի 188,000 ԱՄՆ դոլար(63.6%), որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթածրագրի ծախսը՝ 123,300 ԱՄՆ դոլար (74.4 %), իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 000605000 ենթածրագրինը՝ 64,700 դոլար (49.7%): 2013թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար ԲՆ համաֆինանսավորումը կազմել է 450,000 դոլար, իսկ WWF-Հայաստանի համաֆինանսավորումը՝ 43,223 դոլար:

Ապագա աշխատանքային պլան

Չնայած նշանակալի առաջընթացին, Ծրագիրն ունի իրավական բնույթի խոչընդոտներ, որոնք դուրս են Ծրագրի իրավասության շրջանակներից.

- ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրական փաթեթը դեռևս չի ընդունվել ՀՀ Ազգային ժողովի կողմից,

ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրական փաթեթը ՀՀ ԱԺ Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերով մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ 2013թ. սեպտեմբերի 9-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգում:

- “Խուստուփ” ՊՏ-ի ստեղծման և “Չանգեզուր” արգելավայրի ընդլայնման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը դեռևս չի հաստատվել Կառավարության կողմից,

Որոշման նախագիծն ընդգրկվել է «Չանգեզուր» կենսոլորտային համալիր ստեղծելու, «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև «Խուստուփ» պետական արգելավայր ստեղծելու, «Խուստուփ» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծ մեջ և 2013թ. օգոստոսի 24-ին ներկայացվել ՀՀ կառավարություն/կրկին ներկայացվել է 2013թ. սեպտեմբերի 30-ին և նոյեմբերի 19-ին/:

Առաջարկվող ապագա աշխատանքային պլանը, Ծրագրի՝ մինչև 2013թ. հունիսի 30-ը երկարաձգման հաշվառմամբ, չի պահանջում լրացուցիչ ֆինանսավորում և հիմնված է հետևյալի վրա.

- ԲՀՊՏ օրենքների փաթեթի նախագիծը ուժի մեջ կմտնի առանց նոր տիպի պահպանվող տարածքի՝ “պահպանվող լանդշաֆտի” /IUCN V կատեգորիա/ և պահպանվող տարածքների կառավարման գործում համայնքների պարտավորությունների վերաբերյալ դրույթներում սկզբունքային փոփոխությունների,
- ՀՀ կառավարությունն իրականացնում է “Խուստուփ” պետական արգելավայրի ստեղծումը և “Չանգեզուր” պետական արգելավայրի ընդլայնումը,
- Արենի, Գնիշիկ և Խաչիկ համայնքներն իրականացնում են “Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի ստեղծումը:

Ապագա աշխատանքային պլանի նպատակն է հասնել ծրագրի հետևյալ արդյունքներին և ցուցանիշներին, որոնց այլ կերպ հնարավոր չէ հասնել կամ հնարավոր է միայն մասամբ.

- “Խուստուփ” պետական արգելավայրի պաշտոնապես ստեղծում /6,947հա/ և “Չանգեզուր” պետական արգելավայրի պաշտոնապես ընդլայնում/8,502հա//Կառավարության կողմից դեռ չի հաստատվել/.
- Համայնքային կառավարմամբ “Գնիշիկ ”պահպանվող լանդշաֆտի/6,011հա/ և աջակից գոտու/10,000հա/ պաշտոնապես ստեղծում/ԲՀՊՏ նոր օրենքը դեռ չի ընդունվել/.
- Նոր պահպանվող տարածքների ղեկավար անձնակազմի և տեղական համայնքների համար դասընթացների իրականացում/կառավարման մարմինների պաշտոնապես նշանակում դեռ չի եղել/.
- “Չանգեզուր” և “Խուստուփ” պետական արգելավայրերի միասնական կառավարման և բիզնես պլանների նախագծերի պաշտոնապես հաստատում /Կառավարության կողմից հաստատված որոշում արգելավայրերի ստեղծման/ընդլայնման վերաբերյալ դեռ չի եղել/.
- Համայնքային կառավարմամբ “Գնիշիկ” պահպանվող լանդշաֆտի/6,011հա/ միասնական կառավարման և բիզնես պլանի և Աջակից գոտու տնտեսական զարգացման պլանի պաշտոնապես հաստատում/պահպանվող լանդշաֆտի ստեղծման վերաբերյալ համայնքային ավագանու միացյալ որոշումը դեռ չի եղել/.
- Աջակցություն կառավարման և եկամուտների ստեղծման հիմնական գործողությունների մեկնարկին.
- Որսագողության դեմ միջոցառումների իրականացում/պահակատների, արգելափակոցների և նախագգուշացնող նշանների տեղադրում/.
- Ապրելավայրերի մոնիտորինգային ծրագիր/բնությունը չխաթարող միջամտությունների միջոցով ինդիկատոր տեսակների և ագրո կենսաբազմազանության մոնիտորինգի կարողությունների զորացում/.
- Համակողմանի արածեցման ծրագիր/փորձարարական տարածքներում ոչ կանոնակարգվող արածեցումը կփոխարինվի համայնքների կողմից կանոնակարգվող արածեցմամբ/ .
- զբոսաշրջության զարգացման ծրագիր/աջակցություն զբոսաշրջության մոդելային ուղիների մշակմանը, էժան ենթակառուցվածքի ներդրում, օր. աղբի հավաքման վայրեր, պիկնիկի վայրեր/, և ոչ պաշտոնական նյութերի ստեղծում/ յուրաքանչյուր ՊՏ-ի՝ Չանգեզուր, Խուստուփ. Գնիշիկ առանձնահատկությունները նկարագրող բուկլետների հրատարակում/.
- Սեմինարի կազմակերպում, որի նյութերը կգետեղվեն կարճ ժողովածուի մեջ, ամփոփ ներկայացնելով, թե ինչ է իրականացվել ծրագրի շրջանակներում, ինչ նպատակով և ինչպիսի արդյունքներով:

Ծրագրի՝ առանց լրացուցիչ ֆինանսավորման երկարաձգման հարցը բարձրացել էր դեռևս 2012թ. հուլիսին Ծրագրի միջնաժամկետ գնահատման ժամանակ և 2012թ. դեկտեմբերին՝ Ծրագրի արդյունքների գնահատման նիստի ժամանակ:

“Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում” ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439/00060500”

ծրագիր

2013թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ (նախագիծ)

Տարի	2013			2014					
	Ամիս	Ն	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Բաղադրիչ 1. Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ռազիոնալացում									
<u>Արդյունք 1.1 2006 թ.-ի Հայաստանի բնության պահպանվող տարածքների մասին օրենքի կադարումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում</u>									
“Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը սահմանելու մասին” ՀՀ կառավարության՝ 22 հունվարի 2009թ. թիվ 72-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագծի պատրաստում, շահագրգիռ կողմերի հետ քննարկում, ներկայացում ՀՀ բնապահպանության նախարարություն՝ հետազայում ՀՀ կառավարություն ներկայացնելու համար / ԲԾԻԳ ՊՀ /		■	■						
<u>Արդյունք 1.2. Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով հնստիտուցիոնալ կապերի ձևափոխում</u>									
Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի բաշխում/ ԲԾԻԳ ՊՀ /		■							
<u>Արդյունք 1.3 Թերներկայացված էկոհամակարգերում երեք նոր արգելավայրերի ստեղծում</u>									
“Գնիշիկ” համայնքային կառավարմամբ պահպանվող տարածքի ստեղծման վերաբերյալ որոշման նախագծի մշակում, քննարկում Արենի, Խաչիկ և Մոզրով համայնքների և Վայոց Ձորի մարզպետարանի հետ և աջակցություն համայնքների ավագանիների կողմից համատեղ որոշմամբ հաստատմանը / ԲԾԻԳ ՊՀ , մասնակցությամբ WWF –Հայաստանի և ԾԿԳ-ի/		■	■						
“Գնիշիկ” պահպանվող տարածքի կառավարման մարմնի ստեղծման վերաբերյալ որոշման նախագծի և մարմնի կանոնադրության պատրաստում՝ Արենի, Խաչիկ և Մոզրով համայնքների ավագանիների կողմից համատեղ որոշմամբ հաստատելու համար / ԲԾԻԳ ՊՀ , մասնակցությամբ WWF – Հայաստանի և ԾԿԳ-ի/		■	■						
<u>Արդյունք 1.4. ԲՀՊՏ կառավարման նոր մոդելի մշակում և գործարկում</u>									
ԲՀՊՏ-ների կառավարման երկու նոր մոդելների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի բաշխում / ԲԾԻԳ ՊՀ , մասնակցությամբ WWF –Հայաստանի և ԾԿԳ-ի/		■							
Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների կառավարման հնստիտուցիոնալ կարողությունների զորացում									
<u>Արդյունք 2.1. Արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների համար պետական և տեղական ուսումնական ծրագրեր</u>									
Սյունիքի մարզում կրթական և ուսումնական միջոցառումների			■						

տեղակայման և իրականացման համար համագործակցության վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերում / ԲԾԻԳ ՊՀ /								
“Խուստուփ” և “Չանգեզուր” արգելավայրերի կառավարող անձնակազմի և ՊՏ-ներին հարակից համայնքների համար մասնագիտական դասընթացների իրականացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով Սյունիքի մարզում ՊՏ-ների կառավարման գործընթացում համայնքների մասնակցությանը / ԲԾԻԳ ՊՀ /			■					
Նախատեսվող “Գնիշիկ” համայնքային կառավարմամբ պահպանվող լանդշաֆտի կառավարող անձնակազմի համար մասնագիտական դասընթացների իրականացում / ԲԾԻԳ ՊՀ /			■					
“Չանգեզուր”, “Խուստուփ” և “Գնիշիկ” ՊՏ-ների ղեկավար անձնակազմի համար իրականացված դասընթացներից քաղված դասերի վերաբերյալ հաշվետվություն / ԲԾԻԳ ՊՀ /				■				
“Չանգեզուր”, “Խուստուփ” և “Գնիշիկ” ՊՏ-ների առանձնահատկությունները նկարագրող բուկլետների հրատարակում/ ԲԾԻԳ ՊՀ /							■	
<u>Արդյունք 2.2. Երեք արգելավայրերի կառավարման և բիզնես պլանների մշակում</u>								
“Չանգեզուր” և “Խուստուփ” պետական արգելավայրերի միասնական կառավարման և բիզնես պլանների ներկայացում ՀՀ բնապահպանության նախարարություն / WWF-Հայաստան /	■							
“Գնիշիկ” ՊՏ-ի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանի հաստատում Արենի, Խաչիկ, Մոզրով համայնքների ավագանիների կողմից համատեղ որոշմամբ / WWF-Հայաստան /		■						
“Գնիշիկ” համայնքային կառավարմամբ պահպանվող լանդշաֆտի միասնական կառավարման և բիզնես պլանի հաստատում Արենի, Խաչիկ, Մոզրով համայնքների ավագանիների կողմից համատեղ որոշմամբ / WWF-Հայաստան /		■						
<u>Արդյունք 2.3. Աջակցություն կառավարման և բիզնես պլանների իրականացմանը</u>								
Աջակցություն որսագողության դեմ միջոցառումներին, ներառյալ պահակատների, արգելավակոցների և նախազգուշական նշանների տեղադրում / WWF-Հայաստան /	■	■	■	■	■	■	■	■
Աջակցություն և ՊՏ-ների կենսաբազմազանության և թիրախային ապրելավայրերի մոնիտորինգային հետազոտության գործընթացին կարողությունների զորացում / WWF-Հայաստան /	■	■	■	■	■	■	■	■
Համակողմանի արածեցման ծրագիր/փորձարարական տարածքներում ոչ կանոնակարգվող արածեցումը կփոխարինվի համայնքների կողմից կանոնակարգվող արածեցմամբ / WWF-Հայաստան /					■	■	■	■
Աջակցություն Այցելուների ծրագրի մշակմանն ու իրականացմանը/ տուրիստական ուղիների կազմակերպում, էժան ենթակառուցվածքի հիմնում/տեղեկատվական ցուցանակներ, աղբի հավաքման վայրեր, պիկնիկի					■	■	■	■

վայրեր/ WWF-Հայաստան/								
Արդյունք 2.4. Քաղված դասերի արձանագրում և այլ վայրերում կիրառելու համար պատրաստում								
Սեմինարի կազմակերպում՝ Ծրագրի ձեռքբերումները և գործողությունները ներկայացնելու նպատակով/ WWF-Հայաստան/							■	
Սեմինարի նյութերի և Ծրագրի արդյունքների պատրաստում և հրատարակում/ WWF-Հայաստան/							■	■
Ծրագրի կառավարում								
(i) Իրականացնող կազմակերպությունների կողմից եռամսյակային ֆինանսական և նկարագրական հաշվետվությունների ներկայացում ծրագրի ղեկավարին (մինչև հաջորդող ամսվա 7-րդ օրը)			■				■	
(ii) Ծրագրի ղեկավարի կողմից եռամսյակային ֆինանսական և նկարագրական հաշվետվությունների ներկայացում ՄԱԶԾ (մինչև հաջորդող ամսվա 15-րդ օրը)			■				■	
(iii) Իրականացնող կազմակերպությունների հետ ընթացիկ աշխատանքային հանդիպումների կազմակերպում (անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ)		■			■			
(iv) Հանդիպումներ, քննարկումներ տեղերում (ըստ անհրաժեշտության)	□	□	□	□	□	□		
(v) Ծրագրի Ղեկավար կոմիտեի ժողովներ						■		
(vi) Ծրագրի ավարտական գնահատում, ներառյալ գնահատման տեղերի հայտարարությունը			■	■	■	■	■	
(vii) Ծրագրի ավարտական հաշվետվության պատրաստում և ներկայացում							■	■